ՏԵՂԵԿԱՆՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 223. Վարչական դատարանները

Վարչական դատարանները քննում են՝

1) ~~սույն օրենսգրքի 41.5, 147, 172.3 հոդվածներով, 180[1], 182, 183[1], 189[2]-189[6], 189.9, 189.25, 189.26-189.28 հոդվածներով, 198[2] հոդվածի չորրորդ մասով և 206.16-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.~~ սույն օրենսգրքի 41.5-րդ, 147-րդ, 180[1]-ին, 183[1]-ին, 189[2] -189[6]-րդ, 189.9-րդ, 189.25-րդ, 189.26-189.28-րդ, 206.16-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 170[5], 189[7], 189[18] հոդվածներով և 198[2] հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) ***(կետն ուժը կորցրել է 09.06.22 ՀՕ-155-Ն)***

4) սույն օրենսգրքի 206[8] հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 206.15-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով.

5.1) սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական դեպարտամենտի ղեկավարի) հայցադիմումով.

5.2) սույն օրենսգրքի 182.9-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Հաշվեքննիչ պալատի նախագահի հայցադիմումով.

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.19 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:

Հոդված 224.3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը քննում է սույն օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 1-ին մասով (միայն 123.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու իրավախախտումների մասով), 160-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերով, 169.23-րդ, 172.3-րդ, 182-րդ, 193.1-ին և 193.2-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված 123.4-րդ հոդվածի 1-ին մասով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական գործունեության բնագավառի լիազոր ստորաբաժանման տարածքային բաժինների, իսկ 160-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 169.16-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ մասերով, 169.23-րդ, 193.1-ին և 193.2-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության թույլտվության և լիցենզավորման գործունեության բնագավառի լիազոր ստորաբաժանման քաղաքացիական ծառայողները: